«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«7» սեպտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-32/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 00095651) 21.08.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 21.08.2015թ. ներկայացրած բողոքով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվող ծրագրերի հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով բանակցային

ընթացակարգի առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն հայտով առաջարկել է գին՝ 87000000 ՀՀ դրամ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված գինը եղել է 85000000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որպես Ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.08.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որպես Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն նշել է, որ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Փաստ 1. Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ հակակարկտային կայանի ամենաբարձր կետից ոչ ավել, քան 1,5մ. հեռավորության վրա պետք է տեղադրվի շանթարգել, որը պետք է ունենա կայանի ամենաբարձր կետից 1,2 անգամ ավելի բարձրություն և չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ, այնինչ հաղթող ընկերության ներկայացրած առաջարկում (կայանի տեխնիկական պայմանում), շանթարգելը տեղադրված է անմիջապես կայանի վրա և միացված է կայանին:

Փաստ 2. Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 2 մետր հեռավորությամբ առանձին բետոնե սալիկների վրա, սակայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական պայմաններում ակնհատ երևում է, որ նշված պահանջն ապահովված չէ: «Բարվա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Զենիթ տիպի հակակարկտային կայանների բոլոր մասերը գտնվում են կամարաձև մետաղական շինության ներսում, որի չափսերն են՝ երկարությունը 2200մմ., լայնությունը 1600մմ.:

Կայանի մաս են կազմում թվով վեց 20 կգ. տարողությամբ գազի գլանանոթներ, հարվածային ալիքի գեներատոր (Զենիթի դեպքում՝ ռեակտոր), ղեկավարման հանգույց (վահանակ) և այլն:

Գազի գլանանոթների տրամագիծը (լայնքը) կազմում է 300մմ.: Դրանք դասավորված են մետաղական շինության երկայնքով՝ երկու շարքով: Մեկ շարքով դասավորված երեք գլանանոթները զբաղեցնում են մոտ 1000 մմ. երկարությամբ տարածք: Հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) պայթյունի խցիկն ունի 500մմ. տրամագիծ, իսկ ոտքերի հետ միասին զբաղեցնում է մոտ 900մմ. երկարությամբ տարածք և մոտակա պատից գտնվում է մոտ 100մմ. հեռավորության վրա:

Եթե կամարաձև մետաղական շինության երկարությունից հանենք գլանանոթների և հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) զբաղեցրած տարածքների երկարությունները և ռեակտորի հեռավորությունը մոտակա պատից, ապա կստանանք՝

2200-1000-900-100=200մմ(0.2մ):



Այսինքն, Զենիթ տիպի հակակարկտային կայանի դեպքում հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) և կայանի մնացած մասերի միջև հեռավորությունը լավագույն դեպքում կարող է կազմել 0,2մ՝ 2 մետրի փոխարեն:

Փաստ 3. «Բարվա» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել, չնայած նրան, որ իր կողմից առաջարկված ապրանքը չի համապատասխանել Պատվիրատուի կողմից ձեռք բերվող ապրանքի նկարագրին, պայմաններին և հատկանիշներին:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 18.08.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացվել է որոշում՝ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընկերությունը հայտնել է, որ հավասարության սկզբունքից ելնելով՝ ցանկացած անձ, ով հայտ է ներկայացնում պետական գնման գործընթացին մասնակցելու, Պատվիրատուի գործողություններից պետք է վստահ լինի, որ բոլոր մասնակիցները հավասար են և Ընթացակարգի հաղթող կարող է ճանաչվել միայն այն մասնակիցը, ում հայտը բավարարում է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Ինչպես նշվել է **Փաստ 1-ում,** գնման առարկայի բնութագրում նշվել է, որ հակակարկտային կայանի ամենաբարձր կետից ոչ ավել, քան 1,5մ. հեռավորության վրա պետք է տեղադրվի շանթարգել, որը պետք է ունենա կայանի ամենաբարձր կետից 1,2 անգամ ավելի բարձրություն և չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ, որը հանձնաժողը հաշվի չի առել և, ըստ էության, Ընթացակարգի հաղթող է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որի կողմից առաջարկված ապրանքը չի համապատասխանել Պատվիրատուի կողմից ձեռք բերվող ապրանքի նկարագրին, պայմաններին և հատկանիշներին, ինչը հակասում է Օրենքի 12-րդ հոդվածի 1-ի մասի պահանջներին:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը նշել է, որ առկա է նաև Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, համաձայն որի հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված

կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ըստ Ընկերության՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական պայմանները և Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքը, հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան, էականորեն տարբեր են, քանի որ հրավերով Պատվիրատուն պահանջել է, որ հակակարկտային կայանի ամենաբարձր կետից ոչ ավել, քան 1,5մ. հեռավորության վրա պետք է տեղադրվի շանթարգել, որը պետք է ունենա կայանի ամենաբարձր կետից 1,2 անգամ ավելի բարձրություն և չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ (Փաստ 1):

Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 2 մետր հեռավորությամբ առանձին բետոնե սալիկների վրա, սակայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական պայմաններում ակնհատ երևում է, որ նշված պահանջն ապահովված չէ: «Բարվա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Զենիթ տիպի հակակարկտային կայանների բոլոր մասերը գտնվում են կամարաձև մետաղական շինության ներսում, որի չափսերն են՝ երկարությունը 2200մմ., լայնությունը 1600մմ. (ուղղումը կատարվել է «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 01.09.2015թ. դիմումի հիման վրա):

Կայանի մաս են կազմում թվով վեց 20 կգ. տարողությամբ գազի գլանանոթներ, հարվածային ալիքի գեներատոր (Զենիթի դեպքում՝ ռեակտոր), ղեկավարման հանգույց (վահանակ) և այլն:

Գազի գլանանոթների տրամագիծը (լայնքը) կազմում է 300մմ.: Դրանք դասավորված են մետաղական շինության երկայնքով՝ երկու շարքով: Մեկ շարքով դասավորված երեք գլանանոթները զբաղեցնում են մոտ 1000մմ. երկարությամբ տարածք: Հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) պայթյունի խցիկն ունի 500մմ. տրամագիծ, իսկ ոտքերի հետ միասին զբաղեցնում է մոտ 900մմ. երկարությամբ տարածք և մոտակա պատից գտնվում է մոտ 250մմ. հեռավորության վրա:

Այսինքն, «Զենիթ» տիպի հակակարկտային կայանի դեպքում հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) և կայանի մնացած մասերի միջև հեռավորությունը լավագույն դեպքում կարող է կազմել 0,2մ՝ 2 մետրի փոխարեն (Փաստ 2), սակայն, «Բարվա» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված տեխնիկական պայմանները չեն բավարարում Պատվիրատուի պահանջներին, ինչը հանգեցրել է նաև Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի խախտմանը:

Ընկերությունը հայտնել է, որ նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, պետք է «Բարվա» ՍՊԸ-ի հայտը գնահատեր անբավարար և Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչեր Ընկերությանը, քանի որ ի տարբերություն «Բարվա» ՍՊԸ-ի, «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված կայանի տեխնիկական պայմաններն ամբողջությամբ համապատասխանել են Պատվիրատուի կողմից հրավերով հայտարարված կայանի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածներն՝ Ընկերությունը խնդրել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. <u>ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ Արարատի մարզպետարանը 27.08.2015թ. 1/3/4138-15 գրությամբ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 21.08.2015թ. ներկայացրած բողոքում նշված փաստերի վերաբերյալ հայտնել է, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը և հակասում են գնման ընթացակարգի բողոքարկման դրույթներին: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն: Ոչ մի խոչընդոտ կամ խանգարող հանգամանք չի եղել, որը ինչ-որ չափով կարող էր ազդել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման վրա, ավելին՝ երկու կազմակերպության ներկայացուցիչները գոհունակությամբ են բաժանվել՝ ընդունելով Ընթացակարգի արդյունքները:

Նիստից հետո կազմվել է համապատասխան արձանագրություն հաղթողին ճանաչելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները: 21.08.2015թ-ին կնքվել է համապատասխան պայմանագիր և սույն թվականի օգոստոսի 24-ին՝ մինչ Կենտրոնի

24.08.2015թ. N 01/04.1/2182-15 գրությունը ստանալը (գրությունը ստացվել է Mulberry համակարգով սույն թվականի օգոստոսի 25-ին) հրապարակվել է:

Պատվիրատուն «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի բողոքում նշված փաստերի վերաբերյալ նշել է, որ դրանք անհիմն են և չեն բխում գնումների բողոքարկման ընթացակարգից:

Ըստ Պատվիրատուի՝ բողոքի իրավական հիմքն ամբողջությամբ չի համապատասխանել իրականությանը, որը կարող է պատճառ հանդիսանալ Ընկերության նկատմամբ որոշ քայլեր ձեռնարկելուն, քանի որ կատարված ուսումնասիրությունների արդյունքում «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի փաստաթղթերում և նրանց կողմից Ընթացակարգին մասնակցած անձանց հայտարարություններում առկա են որոշակի տեղեկություններ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ և հարցականի տակ դնել նշված կազմակերպությանը գնումների հետագա գործընթացին մասնակցելու առումով:

Պատվիրատուն նաև նշել է, որ Ընկերությունը չի ունեցել նախորդ երեք տարիների նմանատիպ աշխատանքների ծավալ, տեղյակ չի եղել, թե որտեղ են տեղադրվել իրենց կողմից արտադրված այսպես կոչված 4 կայանները, չի ունեցել իրավունք մասնակցելու գնումներին, առավել ևս բողոքարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, քանի որ դրանով խոչընդոտում է մարզում ՀՀ կառավարության ծրագրով հրատապ լուծում պահանջող այս կարևոր խնդրի իրականացմանը:

Կարևորելով այս ծրագրի իրականացման ժամկետները և հաշվի առնելով, որ Ընթացակարգի արդյունքում կնքվել և հրապարակվել է պայմանագիրը, Պատվիրատուն խնդրել է շուտափույթ լուծում տալ բարձրացված հարցին:

3. ԳԲԽ-32/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-32/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

2. «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) առաջին մասի «Գնման առարկայի բնութագիրը» բաժնում Հրավերով նախատեսված ապրանքների համար ***պահանջվել է ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների առկայությունը***: Ընդ որում, ըստ նույն մասի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի՝ այն պետք է ներկայացվի մասնակցի հայտով:

3. Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, հակակարկտային կայանն իրենից ներկայացնում է կարկտի կանխարգելման առանձին միավոր, որը պետք է կազմված լինի հետևյալ մասերից՝ հակակարկտային հարվածային ալիքի գեներատոր (ՀՀԱԳ), այն իրենից ներկայացնում է մի սարք, որի մեջ դյուրավառ վառելանյութի (գազի) և օդի խառնուրդի պայթյունի հետևանքով առաջանում է հարվածային ալիք: Այն իրենից պետք է ներկայացնի մետաղական կոնստրուկցիա՝ բաղկացած պայթյունի խցիկից և դրա վերևի անցքին միացված ուղղորդական կոնաձև գլանից, օդափոխման համակարգից, բռնկիչից, վառելիքի ներարկիչից, պայթյունի ուժգնության տվիչից:

Նույն հավելվածի համաձայն՝ կայանի տեղադրմանը ներկայացվող պահանջներն են՝

- Կարկտի կանխարգելման կայանները պետք է տեղադրվեն ստացիոնար տարբերակով, ***ընդ որում հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 2 մետր հեռավորությամբ*** առանձին բետոնե սալիկների վրա:
- Կայանի ամենաբարձր կետից ոչ ավել, քան 1,5մ հեռավորության վրա պետք է տեղադրվի ***շանթարգել***, որը պետք է ունենա կայանի ամենաբարձր կետից 1,2 անգամ ավել բարձրություն և ***չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ***:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Հրավերով պահանջվող «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 21.10.2014թ. հաշվառված N 12357 «Զենիթ-Տուրբո» հակակարկտային համակարգի

տեխնիկական պայմանները (ՏՊ ԱՄ 39153613.7445-2014), որի հավելված «բ»-ի («Համակարգի հարմարակազմը») համաձայն՝ Ընկերության կողմից առաջարկվող Զենիթ տիպի հակակարկտային կայանների բոլոր մասերը գտնվում են 2200մմ երկարություն ունեցող կամարաձև մետաղական շինության ներսում, իսկ շանթարգելը միացված է կայանին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.08.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 3-րդ կետով որոշել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին:

6. ՀՀ Արարատի մարզպետարանի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև 21.08.2015թ. կնքվել է հակակարկտային կայանների ձեռքբերման «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով պայմանագիր:

4. <u>ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 21.08.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Արարատի մարզպետարանի 27.08.2015թ. 1/3/4138-15 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը***, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **տեխնիկական պայմանները** տեխնիկական պահանջները սահմանող փաստաթուղթ է, ***որին պետք է համապատասխանեն որոշակի արտադրանքը,*** աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը), ծառայությունը:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև համապատասխան ազգային ստանդարտների ընդունումը կազմակերպությունների տեխնիկական պայման-ները ենթակա են փորձաքննության և հաշվառման Ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն գործող ստանդարտացման կանոնների և ուղեցույցների:

ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

1. Այսպիսով, հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, հակակարկտային կայանի տեղադրման համար պահանջվում է, որ կայանի ամենաբարձր կետից ոչ ավել, քան 1,5մ. հեռավորության վրա պետք է տեղադրվի շանթարգել, որը ***չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ:***

«Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Հրավերով պահանջվող «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 21.10.2014թ. հաշվառված «Զենիթ-Տուրբո» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանները (ՏՊ ԱՄ 39153613 7445-2014), որի հավելված «բ»՝ համակարգի հարմարակազմի ուսումնասիրությունից երևում է, որ ***շանթարգելը միացված է կայանին,*** այնինչ Հրավերին կից տեխնիկական բնութագրով հստակ պահանջվել է, որ կայանի շանթարգելը չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ:

Գտնում ենք, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տվյալ դեպքում ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների) գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելով (Հրավերի համաձայն՝ կայանի շանթարգելը չպետք է ունենա ոչ մի միացում կայանի հետ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների համաձայն՝ շանթարգելը միացված է կայանին)՝

Պատվիրատուն պետք է ղեկավարվեր Կարգի 51-րդ կետի պահանջներով և նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցեր «Բարվա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի հայտը այդ մասով չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին և «Գնումների մասի» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուի կողմից այն պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Ուստի տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 51-րդ կետով սահմանված պահանջները:

2. Հրավերով որպես կայանի տեղադրմանը ներկայացվող պահանջ նշվել է, որ կարկտի կանխարգելման կայանները պետք է տեղադրվեն ստացիոնար տարբերակով, ընդ որում հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 2 մետր հեռավորությամբ առանձին բետոնե սալիկների վրա:

Սակայն, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական պայմանների հավելված «բ»՝ համակարգի հարմարակազմի համաձայն՝ Ընկերության կողմից առաջարկվող Զենիթ տիպի հակակարկտային կայանների բոլոր մասերը գտնվում են 2200մմ. երկարություն ունեցող կամարաձև մետաղական շինության ներսում, իսկ եթե կամարաձև մետաղական շինության երկարությունից հանվեն գլանանոթների և հարվածային ալիքի գեներատորի (ռեակտորի) զբաղեցրած տարածքների երկարությունները և ռեակտորի հեռավորությունը մոտակա պատից, ապա հարվածային ալիքի գեներատորի և կայանի մնացած մասերի միջև չի պահպանվի Հրավերով պահանջվող առնվազն **2 մետր** հեռավորությունը:

Գտնում ենք, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տվյալ դեպքում ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների) գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելով (Հրավերի համաձայն՝ հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 2 մետր հեռավորությամբ, իսկ ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններից ակնհայտ երևում է, որ հարվածային ալիքի

գեներատորի և կայանի մնացած մասերի միջև չի պահպանվում առնվազն **2 մետր** հեռավորությունը)՝ Պատվիրատուն պետք է ղեկավարվեր Կարգի 51-րդ կետի պահանջներով և նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցեր «Բարվա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի հայտը այդ մասով նույնպես չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին և «Գնումների մասի» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուի կողմից այն պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Ուստի տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից կրկին խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 51-րդ կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է բողոքի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ներկայացրած առարկություններին, ապա հայտնում ենք, որ դրանք չեն առնչվում «Բարվա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ Արարատի մարզպետարանի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև 21.08.2015թ. կնքվել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով պայմանագիր և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը՝ առաջարկում ենք «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 21.08.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական

Խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան